Ռ. Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՄԱՐՔՍԸ ԵՎ ՀՈՒՄԱՆԻԶՄԸ

Երկու դասական բանաձևեր, որոնք առանձնանում են մարքս-լենինյան տեսության զարգացման պատմության հետնախորքի վրա, լավագույնս ցույց են տալիս հումանիզմի էության նկատմամբ այդ տեսության հայեցակետի անփոփոխ լինելը։ Այդ բանաձևերից առաջինը պատկանում է Մարքսին (1845 թ.)՝ «Կոմունիզմը իրական հումանիզմ է։ Կոմունիզմը հավասար է հումանիզմի, այն գործնական և զրական հումանիզմ է»։ Երկրորդ. ըստ ժամանակի վերջին բանաձևը տրված է ՍՄԿԿ XXII համագումարի ընդունած ծրագրում. «Կոմունիստական գաղափարախոսությունը ամենահումանիստական գաղափարախոսությունն է»։

Սկզբունքային դիրքավորման այդ անփոփոխությունը հարկ է հատկապես ընդգծել, ի հակադրություն Մարքսի ուսմունքը կեղծողների պնդումների, առանձնապես այն բուրժուական գաղափարախոսների, որոնք ստեղծել են երկու Մարքսի առասպելը, որոնցից երիտասարդը կողմնակից է հումանիզմին, իսկ հասունը հեռացել է հումանիզմից[1]։

Բուրժուական գաղափարախոսները աղավաղված ձևով են մեկնաբանում Կ. Մարքսի վաղ շրջանի ստեղծագործությունների բովանդակությունը, որոնք (որպես տեսականապես ոչ-հասուն) իրենց վրա կրում են դասական փիլիսոփայության ազդեցության կնիքը, հակադրում են դրանք նրա հասուն աշխատությունների գաղափարական ու տեսական բովանդակությանը։ Էկզիստենցիալիզմի հիմնադիրներից Մ. Հայդեգերը անգամ պատրաստ է փառաբանել Կ. Մարքսի այդ վաղ աշխատությունները միայն այն բանի համար, որ այնտեղ երիտասարդ Մարքսը զարգացրել է փիլիսոփայական մի կատեգորիա, որ կենտրոնական է դարձել ժամանակակից էկզիստենցիալիզմի համար՝ մարդկային անհատի օտարման կատեգորիան։ «Հենց այն բանի համար, որ Մարքսը, ըմբռնելով օտարումը, առաջ է ընթացել դեպի պատմության էական շափումը, նրա ըմբռնումը զերազանցում է մնացյալ բոլոր հայեցակետերը»[2]։

Նման գնահատականները ելակետ են ծառայում այն եզրակացությունների համար, որ տնտեսական պրոբլեմների մշակումը, որի շնորհիվ 1844—1845 թթ. երիտասարդ Մարքսի արտահայտած հանճարեղ հիպոթեզը վերած-

---

[1] Н. И. Лапин, Борьба вокруг идейного наследия молодого Маркса, М., 1962; *Ռ. Նավասարդյան, Կոմունիզմը և հումանիզմը, «Լենինյան ուղիով», № 1, 1963*, В. В. Кешелава, Миф о двух Марксах, М., 1963; «Отчуждение и гуманность». *Թարգմ. գերմաներենից.* М., 1967.

[2] M. Heidegger, Platons lehre von Wahrheit, Bern, 1947, S. 54.

վեց գլոբալ տեսության, դարձավ անցման քայլ դեպի հակահումանիզմը[3], թեև իրականում մարքսիզմը գիտական հասուն սիստեմի վերածվելու պրոցեսը և նրա հետ կապված տնտեսական տեսության մշակումը չի կարելի դիտել որպես նահանջ «պաշտոնական մարքսիզմի» հումանիստական սկզբունքներից։ Ընդհակառակը, հենց տնտեսական հիմնավորումն է դարձնում Կ. Մարքսի ուսմունքն իրական, լեցուն կոնկրետ բովանդակությամբ, պատմականորեն գործնական։

Ցույց են արևմտյան գաղափարախոսների փորձերը ապացուցելու, թե մարքսիզմ-լենինիզմը այլևս չի կարող ընկալվել որպես մեր ժամանակաշրջանին ներդաշնակ ուսմունք, որը պատասխանում է կյանքի կարևորագույն պահանջներին։ Մարքսիզմ-լենինիզմը օրգանապես համադրում է դասակարգայնությունը և հեղափոխականությունը պրոլետարական հումանիզմին, ամբողջովին շրջված է դեպի մարդը։ Կ. Մարքսը առաջինն էր, որ գիտականորեն հիմնավորեց, թե միայն կոմունիզմն է ապահովում «հասարակական աշխատանքի արտադրողական ուժերի մեծագույն ծաղկման հետ նաև մարդու առավել լրիվ զարգացումը»[4]։ Մարքս-հումանիստը, իրենով մարմնավորելով պատմության նոր դարաշրջանը, վեր է կանգնած մյուս ժամանակաշրջանների հումանիստների համեմատությամբ։ Նրա ուսմունքը հավատ է ներշնչում դեպի բանականության հզոր ուժը, հավատ դեպի մարդկության պայծառ ապագան։

1

Էապես կարևոր է, որ սկսած իր վաղ շրջանի աշխատություններից, որոնք մեր օրերում էկզիստենցիալիստական կեղծարարության առարկա են դարձել, Կ. Մարքսը իր ողջ տեսական գործունեության ընթացքում հումանիզմի մասին վեճը զուտ մտածողության ոլորտից միշտ փոխադրում էր հասարակական պրակտիկայի հողի վրա։ «Օտարումը» Կ. Մարքսը բմբռնում էր իբրև պատմական պրոցես և «մարդու լիակատար կորուստը» բխեցնում էր ապրանքա-կապիտալիստական աշխարհի յուրօրինակ, կոնկրետ հարաբերություններից։ Կ. Մարքսի մատերիալիստական հայացքներում մարդը դիտվում էր ամենից առաջ ոչ թե իբրև «առառապող» էակ, այլ որպես նյութական բարիքների ակտիվ արտադրող։ Գիտական հումանիզմի հիմնադիր Կ. Մարքսը նշում էր. «Ի՞նչ լրիվ հակադրություն գերմանական փիլիսոփայության, որը երկնքից էր իջնում գետին, մենք այստեղ երկրից ենք հասնում երկինք, այսինքն մենք ելնում ենք ոչ թե այն բանից, թե ինչ են ասում, երևակայում, պատկերացնում մարդիկ, մենք ելնում ենք նաև ոչ թե մտացածին մարդկանցից, երևակայության, պատկերացման արդյունք հանդիսացող մարդկանցից, որպեսզի նրանցից գանք դեպի իրական մարդիկ,— մեզ համար իբրև ելակետ ծառայում են իսկապես գործող մարդիկ, և նրանց իրական կենսական պրոցեսից մենք հանում ենք նույնպես և գաղափարական արտացոլումների և այդ կենսական պրոցեսի արձագանքների զարգացումը»[5]։

Այս հատվածից բավականին պարզ է դառնում, թե ինչու որպես պատմության իրական բովանդակություն, հակառակ մարդկային ուսմունքի և ձևա-

---

[3] Տե՛ս, օրինակ, G. Stiebers, Das Ende der technischen zeitalters, Fr.-a.-M., 1963, S. 89.

[4] Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 19, стр. 120.

[5] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, стр. 25.

փոխվող բացարձակ գաղափարի, Կ. Մարքսի տեսակետով պետք է ճանաչվի «ոչ այլ ինչ, քան իր նպատակները հետապնդող մարդու գործունեությունը»[6]։ Հետագայում, երբ Մարքսը հիմնավորեց օբյեկտիվ պատմական այն օրինաչափությունը, որով շահագործողական հարաբերությունները փոխարկվում են ապատ արտադրողների կոլեկտիվի՝ անդասակարգ հասարակության, նա հանգեց այն եզրակացության, որ «միայն կոլեկտիվում է անհատը ստանում միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս նրա ձիրքերի համակողմանի զարգացման համար և, հետևաբար, միայն կոլեկտիվում է հնարավոր անձնական ազատությունը»[7]։

Իսկապես կոլեկտիվ հարաբերությունների հումանիստական բովանդակությունը, ինչպես և մյուս հումանիստական գրույթները Մարքսի հետազոտություններում սերտ կերպով շաղկապված հանդես եկան նրա կողմից գիտական կոմունիզմի տեսության հետագա ողջ մշակման հետ։ Դրանք շաղկապված էին նաև բուրժուական էկոնոմիկայի հետազոտման մեթոդի հետ, էկոնոմիկա, որը խոր վերլուծության ենթարկվեց «Կապիտալում», որտեղ տնտեսական կատեգորիաների հետևում Կ. Մարքսը կարողացավ բացահայտել արտադրական հարաբերությունները որպես մարդկային ամենաէական հարաբերություններ։ Բացի այդ, 60-ական թթ. տնտեսագիտական ուսումնասիրություններում ապրանքային ֆետիշիզմի գաղտնիքի բացահայտումը հանդիսացավ 40-ական թթ. առաջադրված գաղափարների տրամաբանական զարգացումը։ Այնտեղ, ուր բուրժուական քաղաքատնտեսության միտքը, որն ինքն էր գտնվում ապրանքային ֆետիշիզմի գերության մեջ, տեսնում էր միայն իրեր, ապրանքներ, դրամ, կատեգորիաներ, Կ. Մարքսը հայտնաբերեց մարդ, մարդիկ, մարդկային հարաբերություններ։ Եվ երբ Կ. Մարքսը ցույց է տալիս, թե ինչպես են կապիտալիզմի ընդերքում կուտակվում նոր, սոցիալիստական հասարակության նյութական նախադրյալները, ինչպես է օրինաչափ անցում կատարվում դեպի այդ հասարակությունը, նա համոզված ընդգծում է, որ հենց այդ բեկումնային պահից է «սկսվում մարդկային ուժերի զարգացումը, որը ինքնանպատակ է հանդիսանում»[8]։

Այն հարցը, թե ինչ չափով են էվոլյուցիա ապրել Կ. Մարքսի հայացքները մարդու պրոբլեմի վերաբերյալ, հետևաբար, ինչպիսին է Կ. Մարքսի վաղ շրջանի ուսումնասիրությունների պոզիտիվ բովանդակությունը, հետազոտողների հետաքրքրության առարկան դարձավ հիմնականում Մարքսի 1844 թ. «Տնտեսա-փիլիսոփայական ձեռագրերի»[9] լրիվ տեքստի հրատարակությունից հետո։

Որքան էլ այդ «Ձեռագրերը...» իրենց վրա կրեն հեգելականության և ֆոյերբախականության հետքերը, ոչ առանց հիմքի դրանք մեր ուսումնասիրություններում դնահատվում են որպես Կ. Մարքսի դիալեկտիկա-մատերիա-

---

[6] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 2, стр. 102.

[7] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, стр. 75.

[8] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 25, ч. II, стр. 387.

[9] Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений, М., 1956. Մեզ մոտ «Ձեռագրեր»-ի առաջին հանգամանալից ուսումնասիրությունը կատարված է Լ. Ն. Գաժիտնովի „У истоков революционного переворота в философии" աշխատության մեջ, որը հրատարակված է 1960 թ.։

լիստական հայացքների ձևավորման էական օղակ, որպես դիտական հումանիզմի սիստեմի նախնական, ընդ որում փայլուն ուրվագիծ։ Առավել ևս, որ օտարումը, որն այստեղ վերցված է որպես վերլուծության առանցքային ուղղություն, հանդես չի գալիս որպես հոգևոր երևույթ կամ օբյեկտիվացող ոգու գործողություն։ Որպես հասկացություն այն օգտագործվում է Մարքսի կողմից մարդու պրոբլեմը վերլուծելիս և տարբեր բովանդակություն է կրում իր մեջ «Հեգելյան իրավունքի փիլիսոփայության քննադատության շուրջը։ Ներածություն», «Հրեական հարցի շուրջը» (1843 թ.)[10] հոդվածներում և «Ձեռագրերում...»։ «Ձեռագրերը» ցույց են տալիս, որ 1844 թ. Կ. Մարքսի ստեղծագործության մեջ օտարումը արդեն հանդես է գալիս որպես բարդ քաղաքական-տնտեսագիտական և փիլիսոփայական բնույթ ունեցող հասկացություն։ Այդ պայմանավորված էր Մարքսին ժամանակակից հասարակության վերլուծության ողջ ընթացքով։

Կ. Մարքսը ցույց տվեց, որ երբ դիմում ես մասնավոր սեփականատիրական հասարակության հետազոտությանը, ապա նկատում ես, որ աշխատանքի արտադրած պրոդուկտը «դիմակայում է աշխատանքին, որպես ինչ-որ օտար էակի, որպես ուժի, որը կախված չէ արտադրողից»,— փաստ, որը հատուկ է ոչ թե աշխատանքին ընդհանրապես, այլ «որոշակի» աշխատանքի՝ օտարված աշխատանքին։ Աշխատանքը սոսկ մի պրոցես է, որի ընթացքում մարդն իրեն «առարկայացնում» է իր գործունեության առարկայի մեջ, բայց միայն մասնավոր սեփականության պայմաններում է այդ «առարկայացումը» վերածվում օտարման։

Քննելով աշխատանքի բնույթը, արտադրության մեջ բանվորի դրված տեղը կապիտալիստական հասարակարգի պայմաններում, Մարքսը եզրահանգում է, որ առարկայացումը հանդես է գալիս որպես առարկայի կորուստ և ստրկացում առարկայի կողմից, իսկ առարկայի յուրացումը՝ որպես օտարում, ինքնօտարում»[11]։

Ըստ Մարքսի, օտարումը բացահայտվում է, ինչպես բանվորի հարաբերության մեջ դեպի աշխատանքի առարկան, որն իշխում է բանվորի վրա, այնպես էլ բանվորի հարաբերության մեջ դեպի սեփական գործունեությունը, որը մարդու ինքնիրացման միջոց չի հանդիսանում, բանի որ մարդը մասնակցում է արտադրությանը ոչ որպես կոնկրետ անհատ։ Կ. Մարքսը բացատրում է այդ հետևյալ կերպ. աշխատանքի օտարման հետևանքով մարդը կորցնում է իր ընդհանուր մարդկային էությունը և դառնում իր անհատական գոյության միջոց և ոչ ավելին, և այդ հիմքի վրա էլ տեղի է ունենում մարդու օտարումը մարդուց։ Օտարումը կհաղթահարվի կոմունիզմի հաստատմամբ։ Այսպիսով, արդեն իր վաղ աշխատություններում Կ. Մարքսը կարողացավ ցույց տալ, որ օտարման երևույթը հասարակական հարաբերությունների պատմական զարգացման արդյունք է, այն պատմական է իր բնույթով, ուստի և հաղթահարելի, հետևաբար ոչ մի հիմք չկա գոյության այդ դրամատիկական գործոնը համարելու մարդկային բնությանը հատուկ, ինչպես ճգնում են ապացուցել ժամանակակից էկզիստենցիալիստները։

---

[10] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 1, стр. 408.
[11] К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений, стр. 561.

Կոմունիզմի հումանիստական էությունն այն է, որ հաղթահարվում է ամեն տեսակի օտարում և օբյեկտիվորեն հնարավոր դառնում մարդկանց հաշակոդմանի ներդաշնակ զարգացումը։ Ինչպես երևում է «Ձեռագրերի...» վերլուծությունից, երիտասարդ Մարքսի համար կոմունիզմը համազոր էր մարդու ազատագրմանը, օտարման վերացմանը, ոչնչացմանը, որքանով որ կոմունիզմը վերացնում է մարդուն անմարդացնող, նրա հասարակական հարաբերությունները խաթարող ուժերը։

Հետագա իր բոլոր աշխատություններում Կ. Մարքսը ձեռնթափ չի եղել օտարման կոնկրետ ձևերի ուսումնասիրությունից, ավելին, աշխատանքի օտարման փիլիսոփայական մեկնաբանությունը 1844 թ. ուրվագծից վերածել է քաղաքականապես և տնտեսապես հիմնավորված ուսմունքի և դրանով իսկ առավել խոր բացահայտել հին, շահագործողական հասարակարգի տապալման մասին հեղափոխական ուսմունքի հումանիստական բովանդակությունը։ Այսպես, «Սուրբ ընտանիքում» մենք գտնում ենք այն միտքը, որ ամբողջ հասարակական կյանքի դրամատիզմը ծնող օտարումը բոլորովին էլ միատեսակ չի անդրադառնում հակամարտ դասակարգերի ճակատագրի և գոյության վրա[12]։ «Գերմանական գաղափարախոսության» մեջ երիտասարդ հեղինակությունը կշտամբվում է, որ այն, «իսկական անհատներին իրենց իսկական օտարման մեջ պատկերելու խնդրի փոխարեն,... հրամցնում է օտարման դատարկ միտքը...»[13] և այլն։ Օտարման մասին վերացական, թյուր հիմնավորված ուսմունքը դեն էր նետվում։ Կ. Մարքսի, ինչպես նաև Ֆ. Էնգելսի համար խիստ կարևոր էր տալ դրա պատմա-մատերիալիստական և տնտեսական վերլուծությունը։ Նման վերլուծությունն է ի վիճակի հանգեցնելու ոչ միայն «ճշմարիտ սոցիալիստների» կամ սոցիալիստ-ուտոպիստների առավել արդյունավետ քննադատության, այլև ապացուցելու, որ այն դասակարգային ուժը, որին ծնունդ է տալիս կապիտալիզմը, մասնակցելով ընդլայնված վերարտադրության կապիտալիստական օտարմանը և բոլորից շատ տուժելով նրանից, վերջ ի վերջո շուտ է գալիս (ըստ հետադարձ օտարման գործողության) իր իսկ կապիտալիզմի դեմ։ Այդ ամենը Կ. Մարքսը կիրառեցի «Կապիտալ» աստիճանի վրա։

2

Կ. Մարքսը չէր սահմանափակվում կապիտալիզմի ժխտական բնութագրով, և երբ XIX դարի կեսերին ձևավորվում էին և մարքսիզմը, և էկզիստենցիալիզմը որպես ըստ բովանդակության երկու հակադիր, բայց միատեսակ կերպով կապիտալիստական սիստեմի դեմ ուղղված հոսանքներ, մարքսիզմը միակը եղավ, որը առաջադիմության հիմքը տեսավ աշխարհի գիտական ճանաչողության և վերափոխման մեջ։ Իսկ էկզիստենցիալիստական փիլիսոփայության առաջին առաքյալ Ս. Կյերկեգորը սահմանափակվեց, հայտարարելով, որ միայն «սուբյեկտիվն է ճշմարիտ». ճշմարտությունը հանդիսանում է սոսկ իրական աշխարհի «արսուրդի» սուբյեկտիվ իռացիոնալ պատասխանը։ Ոչ մի նմանություն ճշմարտության մարքսյան հասկացության հետ, որի բացահայտումը, շնորհիվ օբյեկտիվ օրենքների ճանաչման, հնարավորություն է տալիս փոխել աշխարհը։ Բայց կարելի է ասել, որ Կյերկեգորի մոտ «առաջադիմու-

[12] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 2, стр. 39.
[13] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3. стр. 871.

թյան նկատմամբ ունեցած սուբյեկտիվ, հիվանդագին հիասթափությունը» ունալ հիմք ուներ թեկուզ այն պատճառով, որ ըստ էության «Կյերկեգորին կառավարում էին այն ուժերը, որոնց նա ինքը պետք է կառավարեր»[14]։

Կ. Մարքսը միշտ մնում էր հումանիզմի սկզբունքների պրակտիկ իրացման կողմնակից, հանդես էր գալիս մարդու մարդկայնացման ուղիների վերաբերյալ վերացական պատկերացման դեմ։

Մի շարք պատճառներով գրականության մեջ ստեղծվել էր այնպիսի դրություն, երբ, չնայած հումանիզմի տեսության ինտենսիվ մշակմանը, հարցը դրվում էր ոչ այնքան մարքսիզմի կորիֆեյների ամբողջ ժառանգության ուսումնասիրման մասին, որքան այն մասին, թե պահպանե՞լ է արդյոք իր նշանակությունը օտարման կատեգորիան Կ. Մարքսի հասուն, հատկապես տնտեսական գործերում։ Ի միջի այլոց, մարքսիստների բանավեճը էկզիստենցիալիստների հետ վերջին հաշվով պետք է հանգեցներ և այդ հարցադրմանը, բայց նախ և առաջ հարկ էր բացահայտել այդ կատեգորիայի իրական բովանդակությունը վաղ շրջանի ստեղծագործություններում[15]։ «Ձեռագրերի...» էկզիստենցիալիստական աղավաղումների քննադատությունը հաճախ ուղեկցվում էր այն բովանդակության անկանխակալ սխալ մեկնաբանությամբ, որ դնում էր Մարքսը այդ կատեգորիայի մեջ[16]։ Մի շարք հեղինակների մոտ համեմատական վերլուծությունը ցույց էր տալիս օտարման տեղը այն կատեգորիաների սիստեմում, որոնք տրված են Մարքսի առավել հասուն շրջանի աշխատություններում[17], բայց և այնպես «դաղափարական կամրջակ» չէր զգվում Մարքսի վաղ աշխատություններից դեպի նրա 60-ական թթ. տնտեսագիտական աշխատությունները։ Մեր հրատարակություններում հումանիզմը, որպես մարքսիստական ուսմունքի տնտեսական մաս, ցուցադրվում էր գլխավորապես նույն «Ձեռագրերից...» վերցված քաղվածքներով։ «Բանն այն է, սակայն, որ մարդու մարքսյան կոնցեպցիան մեծ մասամբ հասուն և ավարտուն ձևով զարգացված է հենց «Կապիտալում»։ Մինչդեռ այդ իմաստով «Կապիտալի» դաղափարները գրեթե չեն ենթարկվում հատուկ վերլուծության», ինչպես այդ նշված է մարդու պրոբլեմին նվիրված համամիութենական սիմպոզիումում

---

14 С. Финкельстайн, Экзистенциализм в американской литературе (*թարգմ. անգլ.*), М., 1967, стр. 56.

15 *Ա. Կարպուշինը նույնիսկ ասում է, որ օտարման կատեգորիայի վերաբերյալ մարքսյան ըմբռնման նկատմամբ անհրաժեշտ է «ձեռնպահ մնալ վճռական լուծումներից»* («Вопросы философии», № 3, 1963, стр. 166), *չնայած որ գրականության մեջ լուրջ փորձեր են արվել պարզաբանելու այդ հարցը Մարքսի վաղ շրջանի աշխատությունների վերլուծության հիման վրա* (*տե՛ս* О. Корню, К. Маркс и Ф. Энгельс (*թարգմ. ֆրանսերենից*), М., 1961, т. 2, стр. 385.

16 *Տե՛ս, օրինակ,* И. С. Нарский, Об историко-философском развитии понятия «отчуждение», «Философские науки», № 4, 1967, стр. 102, 104, *որտեղ նշվում է. «Ձեռագրերում» զետեղված է* „четыре стадии функционирования отчужденного труда", *չորրորդը համարելով «փոխ-անջատումը» չնայած, որ վերջինս Մարքսը բացատրում է որպես օտարման հետևանք։ Բացի այդ, Մարքսը նկարագրում է «օտարման շարժման» միայն երեք ստադիա* (*տե՛ս* К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений, стр. 565).

17 *Տե՛ս* Т. И. Ойзерман, Формирование философии марксизма, М., 1962, стр. 312, 433; Ю. Н. Давыдов, Лефевр и его концепция отчуждения, «Вопросы философии», № 1, 1963, стр. 92; И. С. Кон, Понятие отчуждения в современной социологии. «Материалы к научной сессии, посв. 50-летию Вел. Окт. соц. рев.», ЛГУ, 1967, стр. 84.

(1966 թ.)[18]։ 1959 թ. գրականության մեջ տառացիորեն ցավով էր նշվում և այն փաստը, որ աշխատանքի օտարման վերաբերյալ և ոչ մի աշխատության հեղինակ անգամ չի հենվում «Կապիտալի» 1-ին հատորի ձեռագրերի այն մասի վրա, որը պարունակում է (ինչպես և «Կապիտալի» ողջ սևագիր օրինակը) այդ կատեգորիայի մանրամասն մշակումը[19]։

Ճիշտ է, երբեմն պարզաբանելու համար գործերի նման վիճակը մեր հետազոտական գրականության մեջ, մատնանշում են «Կապիտալի» ռուսերեն թարգմանությունների առանձնահատկությունները, որտեղ «օտարումը» (որպես հասկացություն) մեծ մասամբ փոխարինված է տերմիններով, որոնք նույնական են ըստ իմաստի[20]։ Բայց դա ձևական է։ Բուրժուական արտադրական հարաբերությունների մեջ դրված և այդ հարաբերությունների ուժով օտարված մարդը քննության է առնված «Կապիտալի» բոլոր հատորներում։ Միաժամանակ, մի շարք հեղինակների կողմից առաջադրվում է մեկ այլ թեզ, որը բոլորովին քննադատության չի դիմանում։ Այդ թեզը հանգում է այն բանին, որ օտարման երևույթը հետազոտելիս Մարքսը ընթացել է անմիջականորեն իր վաղ աշխատություններից դեպի «Կապիտալը» և օտարման բոլոր տեսակների ծավալուն վերլուծությանը, որը տրված է «Կապիտալում» և տնտեսագիտական աշխատություններում ընդհանրապես, սոսկ «1844 թ. ձեռագրերում» և «Գերմանական գաղափարախոսության» մեջ դրված խնդիրների լուծումն է[21]։ Այստեղ անխուսափելի է դառնում մերձեցումը Մարքսի հայացքների «կոհերենտության» կոնցեպցիային[22]։

Մինչդեռ անկասկած է, թե ինչպիսի հսկայական նշանակություն ունի մարդու պրոբլեմի հետազոտումը 50—60-ական թթ. տնտեսագիտական ուսումնասիրությունների, հատկապես «Կապիտալի» մակարդակի վրա, առանց որի հնարավոր չէ ինչ-որ չափով ճիշտ պատկերացում ունենալ Կ. Մարքսի հումանիզմի, նրա ուսմունքի հումանիստական էության վերաբերյալ։

Եթե հասարակական կեցությունը, հասարակական պրակտիկ կյանքը առաջնային և վճռական տարրն է, որ մարդը «գտնում է իր առջև», ապա բնական է ենթադրել, որ հենց մարդկային պրակտիկան է որոշում մարդու տեղն ու դերը հասարակության մեջ, նրա մտածողության բովանդակությունն ու ձևը։ Հետևաբար, հասարակական պրակտիկան պետք է գտնվի անհատի պրոբլեմի

---

18 Տե՛ս «Человек в социалистическом и буржуазном обществе». Докл. и сообщ., М., 1966, стр. 48.

19 Տե՛ս Р. И. Косолапов, Коммунизм и свобода, МГУ, 1965, стр. 48. Խոսքը մեջբերում է „Архив К. Маркса и Ф. Энгельса"-ի II(VII) հ. գետեղված նյութերին։

20 И. С Нарский, Проблема отчуждения в трудах К. Маркса, «Философские науки», № 4, 1967, стр. 53.

21 Նույն տեղում, էջ 61, от „Рукописей 1844 г." шел восходящий путь к трудам зрелого Маркса и, в первую очередь, к „Капиталу", где эта проблема нашла свое разрешение»:— Օրինակ, այսպես են դատում մի շարք հեղինակներ, որոնք Մարքսի վաղ շրջանի աշխատությունները անմիջապես կապում են նրա հասուն շրջանի աշխատությունների հետ։ Վ. Կ. Բրուշլինսկին նման դատողությունները արդարացիորեն որակում է որպես «թերագնահատում տնտեսագիտական ուսմունքի զարգացման այն հսկայական առաջընթացի, որը կատարվեց մարքսիստական թեորիայի հանդես գալով» („Вопросы истории КПСС", № 1, 1967, стр. 134—135):

22 Նման կոնցեպցիայի անհիմն լինելու մասին տե՛ս, օրինակ, М. И. Петросян, Гуманизм, М., 1964, стр. 94—95.

մեկնաբանման կենտրոնում[23]։ Մարդու հասարակական բնույթը իր արտահայտման այլ եղանակ չունի, բացի պրակտիկայում արտահայտվելուց։ «Մարդն ինքն է հանդիսանում իր նյութական, ինչպես նաև ամեն մի այլ՝ իր կողմից իրագործվող արտադրության հիմքը։ Այդ իսկ պատճառով էլ բոլոր այն պարագաները, որոնք ներգործում են մարդու արտադրության այդ սուբյեկտի վրա, ձևափոխում են... նույնպես և նրա այն ֆունկցիաները և գործունեության տեսակները, որոնք նա կատարում է որպես նյութական հարստության ստեղծող[24]։ Դրա համար հարց պետք է դրվի (ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով) այն պայմանների ստեղծման վերաբերյալ, որոնց առկայության դեպքում մարդու պրակտիկ գործունեությունը կարող է հանդես գալ որպես ստեղծագործական, ազատագրական և ոչ թե ավերիչ, անհատին ճնշող ու ստրկացնող։ Այլ կերպ ասած, խոսելով մարդու մասին, պետք է հետազոտել մարդու օտարումը հաղթահարելու համար անհրաժեշտ պայմանները։

Կապիտալը, գտնելով իր սուբյեկտիվ արտահայտությունը ապրանքային ֆետիշիզմում, իսկ օբյեկտիվ արտահայտությունը՝ կապիտալը գործունեության հզոր սուբյեկտի վերածելու մեջ, դիմադրկում է, օտարում արտադրության աշխատավորին, վերածում իր կյանքի ստեղծագործական իմաստավորումից զուրկ անհատի։ Կապիտալը հեղափոխական ճանապարհով խորտակելը կարող է իր իմաստը գտնել սոսկ մարդու, որպես իսկական սուբյեկտի, «վերականգնման» մեջ։

«Կապիտալում» չկան լրիվ կերպով «օտարմանը» փոխարինող հասկացություններ, դրանք բոլորը կապված են նրա հետ և կամ բեկվում են նրա մեջ, լինի դա «աբստրակտ աշխատանքի բաժանում կոնկրետից», «շահագործում» կամ, ասենք, «արտադրողների էքսպրոպրիացիա[25]։ Մարքսը մեծ նշանակություն է տալիս օտարման տեսակներին, որոնք ածանցական են աշխատանքի կապիտալիստական օտարումից, քանի որ օտարման ածանցյալ, վերնաշենքային այդ տեսակները (գաղափարական, սոցիալ-հոգեբանական և այլն) մեծ դեր են խաղում պրոլետարիատին իր հեղափոխական-ազատագրական միսիայի կատարման գործին նախապատրաստելու համար։ Բայց այդ նույն տեսակները, հանդես գալով պետական-բյուրոկրատական ապարատի, անհատի իրավական սահմանափակման, բռնության օրգանների, դեզինֆորմացիայի, խաբեության սիստեմի տեսքով, ամրապնդում են կապիտալիզմի դիրքերը։ Կապիտալիզմը չի վերացնում օտարումը, միայն վերարտադրում է այն նոր ձևերով՝ հասարակական գիտակցության ոլորտում։

Մարքսը անհաշտ դիրք է գրավում ընդդեմ նման հասարակական սիստեմի։ Մասնավոր սեփականության, օտարման և ինքնօտարման մեջ Կ. Մարքսը տեսնում է մարդկային անհատի համար կործանարար բուրժուազիայի ուժերը։ Կ. Մարքսը հատուկ ուշադրություն է դարձնում օտարման այն տեսակների վրա, որոնք նպաստում են պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության քայքայմանը։ Դա ապրանքային ֆետիշիզմն է և նրա արտացոլումը վուլ-

---

23 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, стр. 401—402, 383.

24 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. I, стр. 283.

25 Տվյալ հարցի մասին արտահայտված բազմաթիվ մտքերի մեջ ուշադրավ է այն տեսակետը, որը հիմնավորում է Լ. Դրագոտինը։ Այդ տեսակետը դրական գնահատական է ստացել մեզ մոտ (տե՛ս „Философские науки", № 3, 1964, стр. 122)։

գար քաղաքատնտեսության մեջ, կրոնական դիտակցությունը, ֆետիշային երևույթները կենցաղում, ընտանիքում, սեռերի փոխհարաբերության մեջ։ Առանձին անհատը չի կարող պատասխանատվություն կրել այդ բոլորի համար, նա միշտ էլ հասարակական սիստեմի արդյունքն է, «որքան էլ որ նա սուբյեկտիվ կերպով վերև չհամբառնար նրանից»[26]։ Աղավաղված են հարաբերությունները հասարակության մեջ, աղավաղված է պատկերացումը նրանց մասին։ Եվ դա կրկին արդյունք է երկրի օբյեկտիվ վիճակի, արդյունք հասարակության մեջ իշխող մարդու օտարման։

«Հավելյալ արժեքի տեսություններում» Կ. Մարքսը նշում է, որ արտադրության կապիտալիստական սիստեմը մոտենում է մարդուն ճիշտ այնպես, ինչպես քրիստոնեությունը։ Իսկ քրիստոնեությունը կոնկրետ մարդու հետ ոչ մի գործ չունի, նրա համար բնորոշ է «վերացական մարդու պաշտամունքը», որը հատկապես նկատելի է նրա «բուրժուական տարատեսակներում, ինչպիսիք են բողոքականությունը, դեիզմը և այլն»[27]։

Կապիտալիզմի համար նույնպես «մեկ մարդը արժե ոչ ավել, ոչ պակաս քան մյուսը», բայց նրա հասարակական արժեքը որոշվում է ոչ թե նրա մարդկային հատկություններով, այլ նրանով, թե «ունի՞ արդյոք նա վարկ», «ծնընդյան օրից փող ունի՞», թե ոչ»[28]։ Հանդիսանալով օտարված հասարակական ուժ, փողը կապիտալիզմի ժամանակ դառնում է «մասնավոր անհատի մասնավոր ուժ»[29]։

Այս լույսի տակ պարզ է դառնում կապիտալիստական առաջընթացի արժեքը, որը հանգեցնում է նյութական բարիքների անմիջական արտադրողների քայքայմանը։ Իջեցնելով մարդուն հասարակական արտադրության մասնակի ֆունկցիայի պտուտակի աստիճանին, երբ անհատը դադարում է ամբողջական մարդ լինելուց, բուրժուական հարաբերությունները հանգեցնում են այն բանին, որ մարդ սկսում է վերաբերվել աշխարհին ոչ թե իր անհատականության ամբողջ հնարավոր լիակատարությամբ և հպարտությամբ, այլ իր անհատականության, իր մարդկային էության մասնակի՝ առավել իրական, նյութական արտահայտությամբ։ Կապիտալիզմն իր «մարդկային կյանքի ծախսման լենկթեմուրյան շռայլությամբ»[30] ձգտում է մարդկային անհատականության էական ուժերի անարտադրողական ծախսման։ Վերջին հաշվով դա նպաստում է լոկ անհատի վերածմանը անդեմ անհատի։ Անհատի սոցիալական կայունությունը հասարակության մեջ պայմանական է, քանի որ նրա դլխին միշտ կախված է վտանգ, այն է՝ «աշխատանքի միջոցների հետ խլել նրանից նաև կենսական միջոցները և նրա մասնակի ֆունկցիայի հետ նրան էլ դարձնել ավելորդ»[31]։

Նման հասարակության մեջ աշխատավոր մարդը անտինոմիա է ապրում. մի կողմից «խոշոր արդյունաբերության բնույթը պայմանավորում է աշխատանքի փոփոխությունը, ֆունկցիաների շարժումը, բանվորի համակողմանի շարժունությունը», մյուս կողմից այդ խոշոր արդյունաբերությունը իր կապի-

---

26 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, стр. 10.
27 Նույն տեղում, էջ 89։
28 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. III, стр. 467.
29 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, стр 143.
30 Նույն տեղում, էջ 273։
31 Նույն տեղում, էջ 498։

տալիստական ձևով վերարտադրում է աշխատանքի հին բաժանումը իր քարացած մասնագիտություններով»[32]։ Ճնշվածությունը, իր նկատմամբ անվստահության, դատապարտվածության զգացումը, աշխարհում իր դրության անկայունության գիտակցությունը արդեն բնավ չեն լքում մարդուն։

Եվ ի՞նչ է լինում արդյունքը։ Ընդունակությունների միակողմանիությունը դառնում է օտարման, կամ, ինչպես ինքը Մարքսն է ասում, «մարդու կոտորակման»[33] հետևանքը։ Անհատին ձևավորող, դաստիարակող ուժերի ողջ կոմպլեքսը, աշխատանքի բաժանման հետ մեկտեղ, առաջ են բերում «զերաճում և ծյուրում հասարակության երկու բևեռներում, թեպետ հակառակ ուղղությամբ». ճնշված դասակարգին պատկանող անհատը կորցնում է անհատի հատկություններն ու որակը, պահպանելով «մասնակի բանվորի բթամտության» գծերը, քանի որ «ժողովրդական զանգվածի լիակատար խեղումը» հանդիսանում է անմիջական արտադրողների զանգվածից հավելյալ արժեք քամելու անխուսափելի հետևանքը։ Ինչ վերաբերում է արտոնյալ դասերի ներկայացուցիչներին, ապա նրանց մոտ զերաճած հանդես են գալիս անհատապաշտությունն ու եսասիրությունը, որոնք անհատական հատկությունները ոչ պակաս են խաթարում, քան ծյուրման դեպքում, քանի որ նույն հավելյալ արժեքը «այս աշխարհի զորեղներին» ապահովության, ընտրյալ իշխանության սիստեմում նրանց անհատականության ամրապնդման միակ աղբյուրն է[34]։

Կապիտալիստական հասարակության մարքսյան վերլուծության արժեքը ի վիճակի չեն ժխտելու անգամ բուրժուական գաղափարախոսները։ Նրանցից առավել անաչառները պատրաստ են ընդունելու, որ «Կապիտալը» կարող է լինել «վերլուծության և ծանոթագրությունների առարկա անգամ նրանց կողմից, ովքեր չեն հավատում կամ վախենում են նրա ազդեցությունից»[35]։ Հատկանշական է ամերիկյան պրոֆեսոր Ու. Ուիլյամսի արտահայտությունը Մարքսի մասին. «Մարքսի կոնցեպցիան առաջարկում է այնպիսի ըմբռնում և իդեալներ, որոնց խիստ կարիքն ունի Ամերիկան, եթե նա ցանկանում է արդյունավետ կերպով զլուխ հանել բոլոր ներկա և ապագա պրոբլեմներից»[36]։

Միաժամանակ, ցատագովական նպատակներով բուրժուական գիտնականները եռանդով Մարքսի հետագոտական արժեքը փոխագրում են մինչմոնոպոլիստական կապիտալի ժամանակաշրջանը, դրանով իսկ փորձելով ապացուցել, թե Մարքսը և նրա ուսմունքը, կապիտալիզմի վերջնական խորտակման անխուսափելիության և անհրաժեշտության վերաբերյալ եզրակացությունները ընդունելի էին անցյալում։ Իսկ այժմ, որպես հետևանք այն բանի, որ կապիտալիզմը փոխել է իր բնույթը, մարդու գոյությունը չի կարող բնութագրվել նրան օտարող այն ուժերով, որոնք նշել է Մարքսը իր «Կապիտալում»։

Անտրոպոլոգիական բնույթ հաղորդելով օտարմանը, բուրժուական փիլիսոփայությունը մարդու ուսերին է բարդում այն մեղքը, որը օբյեկտիվորեն պարունակում է իր՝ մասնավոր սեփականատիրական հասարակարգի մեջ։ Պատահական չէ, որ ժամանակ առ ժամանակ հռչակվում են արտաքուստ ար-

---

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում, էջ 366։

34 Նույն տեղում, էջ 499։

35 Տե՛ս, օրինակ, Э. Жамс, История экономической мысли XX века (թարգմ. ֆրանսերենից), М., 1959, стр. 44.

36 Տե՛ս «Проблемы мира и социализма», № 10, 1966, էջ 35։

մատական տեսություններ «ընդհանուր բարեկեցության հասարակարգ», «սոցիալական գործակցության» հասարակարգ և այլն ստեղծելու վերաբերյալ։ Առանձին ռեֆորմները և տեսությունները չեն կերպարանափոխում կապիտալիզմը։ Կապիտալիզմի քայքայումը և սոցիալիզմի համաշխարհային-պատմական հաջողությունները ցուցադրում են մարքս-լենինյան ուսմունքի ուժը, իսկ մեր հարյուրամյակի անցած առաջին հիսուն տարիները բավականաչափ հաստատումն բերեցին այն հեղափոխական եզրակացության արդարացիության, որ կատարել էր Մարքսը, դիտականորեն ապացուցելով իր «Կապիտալում» կապիտալիստական սեփականության «մահվան ժամի» անխուսափելիությունը։

3.

Իր հասուն ստեղծագործություններում Մարքսը հանդես է գալիս որպես հետևողական պրոլետարական հումանիստ։ Նա մատնանշում է, որ պրոլետարիատի ելույթի նպատակը պետք է դառնա ոչ միայն օտարման ծնած պատրանքների թոթափումը, այլև բաղիսի քանդումը նրան հատուկ աշխատանքի օտարմամբ, որոնց վրա խարսխվում են պատրանքները։ Դրա ուղին Մարքսը տեսնում էր միայն սոցիալիստական հեղափոխության մեջ։ «Կապիտալը», որպես պրոլետարական, լավատեսական հումանիզմի մեծագույն մարմնավորումը, «փաստերի Մոնբլանի» հիման վրա ապացուցեց, որ կապիտալիզմի խորտակումը միաժամանակ կդառնա աշխատանքի օտարման, իսկ հետո նաև օտարման այլ տեսակների խորտակում։ Դա պայման կհանդիսանա այն բանի համար, որպեսզի մարդը կարողանա «հանդես բերել իր իսկական անհատականությունը»։

«Կապիտալում» ներկայացնելով փայլուն հիմնավորումը՝ այն ճշմարտության, որ կոմունիզմը կստեղծի օբյեկտիվ սոցիալ-տնտեսական նախադրյալներ անհատի ազատության և ծաղկման համար, Կ. Մարքսը նշում է, որ միայն հեղափոխական պրակտիկան կ՝հանդիսանա այն բովը, որի միջով մարդը կգնա դեպի ազատություն։ Այդ որում արդեն կոմունիզմի առաջին փուլում (սոցիալիզմի ժամանակ) նյութական հարստությունը կկուտակվի «բանվորների պահանջների համար» և հասարակությունն իր ամբողջությամբ վերցրած կդադարի դիմակայել անհատին։ Կոմունիզմի այդ ստադիայում մարդը կազատվի կապիտալիստական հարաբերությունների ճնշումից։ Արտադրության ոլորտում մարդը ազատություն կստանա։ Ավելին, արտադրության սոցիալիստական անհրաժեշտությունը կհանդիսանա միակ հնարավոր հիմքը, մարդու որպես անհատի զարգացման ելակետը։ «Ազատությունն այդ բնագավառում,— բացատրում է իր միտքը Մարքսը,— կարող է կայանալ միայն նրանում, որ սոցիալականացած մարդը, միավորված արտադրողները ռացիոնալ կերպով կանոնավորում են իրենց այդ նյութափոխանակությունը բնության հետ, դնում են այն իրենց ընդհանուր հսկողության տակ, փոխանակ այն բանի, որ նա տիրապետի իրենց իրրև կույր ուժ. այն կատարում են ուժերի նվազագույն ծախսումով և մարդկային բնույթին առավել արժանի ու նրան համապատասխան պայմաններում։ Բայց և այնպես, համենայն դեպս, այն մնում է անհրաժեշտության թագավորություն»։ Համեմատելով սոցիալիզմը կոմունիզմի բարձրագույն ստադիայի հետ, Մարքսը եզրակացնում է. «Նրանից (այսինքն սոցիալականացած մարդու համար անհրաժեշտության թագավորությունից

—Ռ. Ն.) այն կողմ սկսվում է մարդկային ուժի զարգացումը, որը ինքնանպատակ է, ազատության իսկական թագավորություն...»[37]։

Սոցիալիզմը, որպես կոմունիզմի առաջին փուլ, նշանավորում է պատմության բնկումնային ժամանակաշրջանը, սկզբնավորելով հասարակության և անհատի հարաբերությունների հումանիզացումը։ Եվ եթե փիլիսոփայությունը քաղաքակրթության պատմության հնկա ժամանակաշրջանում նրանց դիտում էր իբրև հակոտնյաներ, ապա սոցիալիստական պրակտիկան մերժեց այդ հակադրումը, հաստատելով մարքսիզմը։ Արտադրության միջոցների համայնացումը, մասնավոր սեփականության վերացումը, հետևաբար և մարդու կողմից մարդու շահագործման հարաբերությունների վերացումը էական, որոշիչ գործոններ եղան նման հեղաբեկման համար։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո հասարակության մեջ ձեռնարկված միջոցառումների ամբողջությունը պետք է սոցիալիզմին հումանիստական բովանդակություն հաղորդեր։

Առաջընթացի աստիճանի վրա, երբ հեղափոխական պրոլետարիատի ուժով մարդու օտարման հիմնական բաղան՝ մասնավոր սեփականատիրական հարաբերությունները վերջնականապես կործանվել են, անհատը օժտվում է հասարակության հետ կապող շոշափելի հարաբերություններով։ Որքան որ որակապես նոր է մարդու օբյեկտիվ կեցությունը սոցիալիզմի օրոք, այնքան էլ անհատը ձևափոխվում է, հարստանում հասարակության շահերի ողջ հարբությամբ, իր ակտիվությամբ իրացնում է անձնական ազատությունը։ Հարաբերությունների հումանիզացումը, ինչպես և ինքը ազատությունը, իրականություն են դառնում այն չափով, ինչ չափով, համաձայն Մարքսի, պահպանվում է «սոցիալականացած մարդու» համար անհրաժեշտության թագավորությունը։ Մեր գրականության մեջ միշտ չէ, որ այդ հաշվի է առնվում, իսկ եթե ընդունվում էլ է բացարձակ ազատության կոնցեպցիան սոցիալիզմի նկատմամբ ժխտելու անհրաժեշտությունը, չի նշվում անհատի ազատության չափերի և սահմանափակումների սիստեմը[38]։ Իսկ բացարձակ ազատությունը, միայն մտքում թույլատրելի ազատությունը, ժխտվել է ոչ միայն մարքսիստների, այլև Հեգելի կողմից, որպես «ոչ կենդանի ազատություն»[39]։ Մինչդեռ սոցիալիզմը գիտե արգելքների իր սիստեմը, որոնք սուբյեկտիվորեն և օբյեկտիվորեն որոշում են հասարակության ամեն մի անդամի արարքի պատասխանատվությունը[40]։ Ոչ թե օտարումը, այլ օտարման վերապրուկային ձևերն են սահմանափակումների այդ սիստեմի մեջ գտնում իրենց արտահայտությունը։ Դրանք հաղթահարվում են սոցիալիզմից կոմունիզմին անցնելու պրոցեսին զուգընթաց և դրա համար էլ անհատի համար չունեն այն համընդհանուր ողբերգական նշանակությունը, որն առհասարակ վերագրում են օտարմանը էկզիստենցիալիստները[41]։

---

37 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 25, ч. II, стр. 387.

38 Տե՛ս, օրինակ, „Личность. Общество. Государство" ժողովածուն, М., 1966, стр. 36—37.

39 Տե՛ս Гегель, Соч., т. 4, стр. 91.

40 Տե՛ս Ռ. Նավասարդյան, Հեղափոխություն, ազատություն և ընտրանքի պատասխանատվություն, «Լենինյան ուղիով», № 2, 1968։

41 Օտարման առկայությունը սոցիալիզմի ժամանակ, որոշ վերապահումներով, ընդունվում է մի շարք հետազոտողների կողմից. Ռ. Ի. Կոսոլապով, Ա. Ֆ. Շիշկին, Վ. Պ. Օպուրցով (ՍՍՀՄ), Դ. Կլաուս (ԴԴՀ), Պ. Վրանիցկի (Հարավսլավիա), Ա. Շաֆֆ (Լեհաստան)։

Սոցիալիզմի գոյության և զարգացման կենդանի փորձը ցույց տվեց, որ նրա նպատակը այնպիսի պայմանների ստեղծումն է, երբ մարդը կօգտվի կենսական և հոգևոր կատարելագործման հնարավորություններից։ Վերացնելով դասակարգային և ազգային հակամարտությունը, սոցիալիզմն ամեն ինչ արեց հասարակության յուրաքանչյուր անհատի ազատ և համակողմանի զարգացման համար, այդ նպատակով դիտական, տեխնիկական և կուլտուրական առաջընթացի բոլոր հաջողությունները օգտագործելու համար։

Կ. Մարքսի հումանիզմի ուժը նրա կենսունակության մեջ է։ Պատրանքների, մարդու երջանկության մասին երազանքի փոխարեն, քաղաքական մարդասիրության, մարդու նկատմամբ դատարկ ու կեղծավոր ցավակցության փոխարեն, վերացական հումանիզմին հատուկ այդ ընդհանուր ու սնամեջ հայտարարությունների փոխարեն՝ հեղափոխական, իրական պայքար՝ վերացնելու համար սոցիալական այն պայմանները, որոնք դատապարտում են մարդուն չանիագործման ու հոգևոր ստրկության, պայքար սոցիալիզմի, որպես հումանիստական իդեալների հետևողական կենսագործման հիմքի, հաղթանակի համար՝ ահա մեծ Մարքսի հումանիզմի էությունը։

Կյանքի ճշմարտությունը մարքսիզմի կողմն է, որով և ղեկավարվում է մեր կուսակցությունը։

Կ. Մարքսի ծննդյան 150-ամյակի առթիվ ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներում ընդգծվում է, որ հեղափոխական ուսմունքի զարգացման լենինյան էտապը XX դարի մարքսիզմն է, արդի դարաշրջանի մարքսիզմը։ Այդ էտապը անշեղորեն շարունակվում է ՍՄԿԿ ու եղբայրական կուսակցությունների թեորիական գործունեությամբ, մարմնավորվում է միջազգային կոմունիստական շարժման պրակտիկայում։

Տարբեր աշխարհամասերի առաջադեմ ուժերը ջերմորեն պաշտպանում են Բուդապեշտում և Երևանում վերջերս կայացած կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների հանդիպման ժամանակ ընդունված որոշումը, որը կոչ է անում բարձրացնել զգոնությունը իմպերիալիզմի ագրեսիվ նկրտումների և քայքայիչ գործողությունների նկատմամբ։ Այդ կոչը ամբողջովին վերաբերում է գաղափարական պայքարին, որին մեր ժամանակներում պետք է ավելի հարձակողական թափ հաղորդել։ Գաղափարախոսությունը դասակարգային պայքարի կարևորագույն ճակատն է։ Այստեղ բոլորովին անթույլատրելի են քաղաքական անտարբերությունն ու պասսիվությունը։ Այստեղ չի կարող լինել խաղաղ գոյակցություն, ինչպես չի կարող լինել դասակարգային խաղաղություն պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև։ ՍՄԿԿ Կենտկոմի ապրիլյան պլենումը (1968 թ.), արդի իրադրության վերլուծության հիման վրա, իր որոշման մեջ, իրավացիորեն նշեց, որ իմպերիալիզմը լուրջ ոնցումներ ու ձախողումներ կրելով ներքին ու արտաքին քաղաքականության ասպարեզում, ավելի է մեծացնում քաղաքական ու գաղափարախոսական քայքայիչ պայքարը սոցիալիստական երկրների, կոմունիստական ու դեմոկրատական շարժումների դեմ։ ՍՄԿԿ Կենտկոմի պլենումի որոշման մեջ ընդգծվում է, որ «անհաշտ պայքարը թշնամական գաղափարախոսության դեմ, իմպերիալիզմի մեքենայությունների վճռական մերկացումը, ՍՄԿԿ անդամների և բոլոր աշխատավորների կոմունիստական դաստիարակությունը, կուսակցության ամբողջ գաղափարական գործունեության ուժեղացումը առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում, կազմում են բոլոր կուսակցական կազ-

մակերպությունների գլխավորագույն պարտականություններից մեկը։ Նրանց պարտքն է հարձակողական պայքար մղել բուրժուական գաղափարախոսության դեմ, ակտիվորեն հանգես գալ գրականության, արվեստի և այլ ստեղծագործություններում սովետական հասարակարգի սոցիալիստական գաղափարախոսությանը խորթ հայացքներ անցկացնելու փորձերի դեմ»։

* * *

Այն ժամանակ, երբ երիտասարդ Մարքսը կոմունիզմի առաջին սահմանումներն էր տալիս, սկզբից ևեթ այն բնորոշելով իբրև իրական հումանիզմ, մի այլ մտածող իր ֆետիշը դարձրեց հուսախաբությունը։ Դա Ս. Կյերկեգորն էր։

Այսօր Ս. Կյերկեգորի հետևորդները սահման չունեցող այդ հուսախաբությունը, որպես մարդու ճակատագիր, ամրապնդել են էկզիստենցիալիզմի իրենց փիլիսոփայության մեջ։ Մ. Հայդեգերը, այդ փիլիսոփայության հիմնադիրը, պատկերում է հասարակության զարգացման պատմական պրոցեսը որպես խարխափում անտառային խավարամած արահետներում, անվերջ գիշերվան ընդառաջ[42]։ Դա ոչ միայն Հայդեգերի պեսիմիզմն է, և ոչ էլ անգամ էկզիստենցիալիզմի։ Դա պեսիմիզմ է ամբողջ սոցիալական սիստեմի մտածելակերպի մեջ, որի բախտը կանխորոշված է պատմության կողմից, կոմունիզմի կենսունակությամբ, որը կառուցում են Մարքսի միլիոնավոր հետևորդները, իրենց ետևից տանելով աշխատավոր զանգվածներին երկրագնդի բոլոր մայր ցամաքներում, համախմբելով ողջ առաջավոր, դեմոկրատական, հակաիմպերիալիստական ուժերը։ Կոմունիզմը կյանքի բնության և մարդու, մարդու և հասարակության միջև եղած կոնֆլիկտը[43], նա կհանդիսանա, ասում էր Մարքսը, «պատմության հանելուկի լուծումը»։ Մարքսի գաղափարների հումանիզմը լուսավորում է ուղին դեպի այդ լուսապայծառ ապագան։ «Արդեն ավելի քան 100 տարի է,— նշված է Մարքսի ծննդյան 150-ամյակի առթիվ ՍՄԿԿ ԿԿ-ի թեզիսներում,— պատմական զարգացումն ընթանում է մարքսիստական տեսության նախանշած ուղիով։ Պատմության ամեն մի շրջադարձում մարքսիզմը նորանոր հաղթանակներ է տարել։ Կյանքի ճշմարտությունը մարքսիզմի կողմն է և նա այսուհետև ևս հաղթանակներ կտանի, մոտեցնելով մեր մոլորակի վրա կոմունիզմի լիակատար հաղթանակի ժամանակը»։

---

[42] M. Heidegger, Holzwege, Fr.-a.-M., 1950.

[43] M. K. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений, стр. 588.